1016. *ԽԱՉՔԱՐ, քիվին 1 տող.*

ՍԲԽԱՆՍՄԱՐԻԱՆԻՆ — ՍԲ. Խ[Ա]ՉՍ ՄԱՐԻԱՆԻՆ:

1017. *ԽԱՉՔԱՐ, քիվին 1 տող.*

ՍԲԽՉԽԱՆԱՏՐԻՆԱԽԻՆՄԿԻՐՏՉԻՆ — ՍԲ. ԽԱՉ[Ս] ԽԱՉԱՏՐԻՆ, ԱԽԱԹԻՆ, ՄԿԻՐՏՉԻՆ:

*Հրատ. Սմբատյանց, 507։*

1018. *ԽԱՉՔԱՐ, որն այժմ գոյություն չունի.*

Աստուծ ողոր. կանգնողի խաչս, թվ. ՌԻԴ: (1575):

Ծանոթ. *Ենթադրում ենք, որ այն սխալներով է վերծանված:*

*Հրատ. Սմբատյանց, 507։ Լալայան, XVIII, 138։*

## ԶՈՐԱԳՅՈՒՂ (ՆԱԽԿԻՆՈՒՄ՝ ՎԱՅԻ ԱՂԱՅՈՒ, ՀՆՈՒՄ՝ ՇՈՂԱԳԱ ԿԱՄ ՇԱՂՈՒԱԳԱ)

*Այս գյուղը հնագույն բնակավայր է, որի մասին հիշատակվում է IX դարի վերջի և X դարի սկզբի պատմիչ Ասողիկը։ Նրա հաղորդած տվյալների համաձայն այստեղ, IX դարի վերջում կառուցվել է Շողագա վանքը։ Գյուղի հնության վկան է նաև նրա արևմտյան կողմի բարձր լեռան գլխին կանգնած վաղ միջնադարյան հիմնապատերով բերդը, որը տեղում կոչվում է «Սանդղյա»։*

*Գյուղում գոյություն ունեն երկու խումբ հուշարձաններ, որտեղ կան արձանագրություններ.*

Ա. Շողագա կամ Շաղուագա վանք. *գտնվում է գյուղի արևմտյան եզրին, մի լեռնաձև բլրի վրա. շինվել է IX դարի վերջին տասնամյակներում՝ Գեղարքունիքի մեծ տիկին, շինարար Մարիամի հովանավորությամբ, որը գնել և վանքին է նվիրել նաև երկու գյուղ։ Վանքը շեն է եղել և առաջնորդ է ունեցել մինչև XVII դարի վերջերը։ Այժմ ավերակ է. կիսավեր վիճակում մնում են հյուսիսային, արևելյան և արևմտյան պատերը միայն։ Շինվել է սրբատաշ քարով. եղել է եռաբսիդ գմբեթավոր շենք, չորս անկյուններում ունենալով ավանդատներ։ Ավերվելուց հետո վանքից շատ քարեր տարել և օգտագործել են Մասրուց անապատի, գյուղական եկեղեցու և այլ շենքերի մեջ, որպես գերեզմանաքարեր ու շինանյութ։*

*Ունեցել է շինարարական մեծ արձանագրություն, որը հին սովորությամբ, մի տողով գոտևաձև տեղավորված է պատերի վերին մասերում՝ արտաքուստ. դրա չնչին մասերն են մնում այժմ՝ տեղում և այս ու այն կողմ տարված քարերի վրա։ Պատմագիր Ստ. Օրբելյանը օգտագործել է այդ արձանագրությունը Մարիամ իշխանուհու գործունեությունը շարադրելու առթիվ։*

*Եկեղեցու արևմտյան կողմում կա մի առանձնակի մատուռ, որը, հավանաբար, Մարիամ իշխանուհու դամբարանատեղին է։ Մի այլ մատուռի հիմնապատերը կան առաջինի հյուսիսային կողմում, որի մեջ կանգնած է 984 թ. մի հին խաչքար (№ 1020)։*

*Եկեղեցու շուրջը, ամբողջ բլրի վրա, տարածված ընդարձակ գերեզմանատան մեջ կան բազմաթիվ տապանաքարեր և խաչքարեր՝ հնագույնը 1216 թ. (№ 1021)։*

Բ. Մասրուց անապատ. *Զորագյուղի արևելյան եզրումն է այժմ, նախկինում այն այս և Շակքար գյուղերի արանքումն էր, հավասար հեռավորության վրա և, ըստ երևույթին առանձին գյուղի մեջ՝ Մասրիս անունով, որից և ստացել է իր անունը։ Գրավոր աղբյուրներից միայն Ջամբռի մեջ է հիշատակված այս անապատը, որը ենթակա է եղել Շողագա վանքին:*

---

[1] «Պատմութիւն», Թիֆլիս, 1911, էջ 174։



16—619

Մարուց անապատը մի փոքր գմբեթավոր եկեղեցի է, շինված կոպտատաշ քարերով, մուտքը հյուսիսից է, որի առաջ եղել է մի հասարակ գավիթ. ունի պարսպով շրջափակված բակ։ Շինության ստույգ ժամանակը հայտնի չէ, բայց իր ընդհանուր բնույթով նման է Գեղարքունիքի IX—X դարերի կառույցներին։ Անապատի պատմության աղբյուրները նրա պատերին և շուրջը եղած արձանագրություններն են, որոնցից հնագույնը XIII դարից է (№ 1042)։

Անապատի նորոգումների ժամանակ օգտագործել են Շողագա վանքի սրբատաշ քարերից, որոնց մեջ կան վերջինիս շինարարական արձանագրության մասեր, հիշատակելի է, որ դրանցից մեկի վրա կա Մարիամ իշխանուհու անունը։

Պարսպափակ բակի և գավթի ավերակների մեջ կան շատ խաչքարեր (նաև եկեղեցու ներսում), դրանցից ամենահինը ունի 1292 թ. (№1043)։

Արժե հիշատակել, որ գավթի մեջ կանգնած խաչքարերի մոտ կան գլուխ-արձաններ, որոնք հավանաբար դրված են եղել կտուրի ճակատների անկյունների վրա և թերևս մեկենասներին կամ կառուցող ճարտարապետներին են պատկերել։

Զարադյուղի հուշարձանների վրայից մեր ժողովածուում տեղ են գտել 40 արձանագրություն, որոնցից միայն 14-ն է հնում հրատարակված եղել։

**1019. ՇՈՂԱԳԱ ՎԱՆՔ**, մխատող արձանագրություն, որն ակոսված է եղել հարավային պատի վրայից և շարունակվել արևելյան և հյուսիսային պատերի վրա, նրանց քիվի տակ. գեղատառ.

ա — բ

.... Ք = ՅԱՆՈՒՆԴԼ...|.... ՍԻ = ԵՒ ՎԱՍՆ ՅԻՇԱՏԱԿԻ ԾՆՈՂԱՑԻՄ

գ

... ԵՑԻՋԵԳԻՒՂՆ

դ

... ՍԱՒՈՐ|ԻՆ ՊՈՂՈ...

ե

ԵՍ ՄՐԻՍ.......

զ

.. ՏԱՌԱՋԻՆ

է

.. ԻՄՈՅ ԻՄՈՒ .........

Ի թագաւորութեան . . . կանգնեցի զեկեղեցիս յանուն գլխաւոր առաքելոյն Պօղոսի . . . վասն յիշատակի ծնողաց իմոց . . . զնեցի զգիւղն . . . .

Ծանոթ. Դեռևս առաջին նկարագրող Շահխաթունյանի ժամանակ (1842) եկեղեցին քանդված լինելու հետևանքով, արձանագրության չնչին մասերն են պահպանված եղել։

Բնական ավերմունքից բացի, Մարուց անապատի նորոգման համար օգտագործել են Շողագա վանքի սրբատաշ քարերը, որոնց հետ նաև արձանագրության մասերը։

Մեր գծագրած բեկորները գտնվում են անապատի՝ Ա. արևելյան պատի մի քարի վրա. Բ և Գ. հյուսիսային պատի վրա. Դ. մի անկյունաքարի վրա, որն այժմ օգտագործված է որպես տապանաքար՝ եկեղեցու արևելյան կողմում. Ե. մեկ քարի վրա, որը ագուցված է Մարուց անապատի արևմտյան պատի հարավային մասին, արտաքուստ. Զ և Է. ընկած են Մարուց անապատի կտուրի հարավ-արևելյան մասում։

Հրատ. Ջալալյան, Բ, 123։ Սմբատյան, 510։ Ալիշան, 51։ Լալայան, XXIV, 57։ Կոստան. 204

1020. ԽԱՉՔԱՐ, մեծ, ուղղանկյուն, կանգնած է վանքի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող կիսավեր մատուռի մեջ. շրջանակներին և հարավային կողին.




:ՆԼԳ: (984) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵ ԱՅՆՍ, Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ . . . . . . . ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ . . . . . . ՍՐ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԱՆՁԻՆ ԻՄՈՅ ԵՒ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ ՅՈՎԱՆՆԻՍԻ ...:

Ծանոթ. *Թվականի հիման վրա թագավորի անունը պետք է վերականգնել Սմբատ (Բ. տիեզերակալ) և կաթողիկոսինը՝ Խաչիկ (Ա. Արշարունի):*

Լուսանկ. 205

1021. ԽԱՉՔԱՐ, կանգնած է գերեզմանատան արևմտյան մասում, քիվին և թևերի արանքներում.




ԵՍ Ս[Ի]ՆԴՊԱՏ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ.| ՅԻՇԵՔ [Ի] ՔՍ.| ԹՎ.| :ՈԿԵ: (1216):

1022. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, կանգնած ճարտարապետորեն ձևավորված հատուկ մի պատվանդանի վրա, որի արևմտյան երեսին 4 տող.

ՈՉԳՅԻԿԼԱՆՈՒԹԵՍԵՒԱԴ ԻԵԻՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ
ՋՐ ՅՈՎԱՆԻՍԻ ԵՍՍՈՒՏԱՆ ՈՒՆԵՐԵՑՈՎԱՍԱԲՍՈՐԴ
ԻԱՐԺԱՆԱՒՈՐՔԱՃԱՆԱՅԻ ԽՈՒՐՏԻՐԱԿԱՆԿՆԵՑԻՁԽ
ԱՉՍԾՆԱՒՂԱՑԻՄՈՑ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԵՔ

:ՈՉԳ: (1234) ՅԻՇԽԱՆՈՒԹՆ. ՍԵՒԱԴԻ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ.| ՏՐ. ՅՈՎԱՆԻՍԻ, ԵՍ ՍՈՒՏԱՆՈՒՆ ԵՐԵՑ ՅՈՎԱՍԱՓ, ՈՐԴ-|Ի ԱՐԺԱՆԱՒՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ ԽՈՒՐՏԻՐԱ, ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽ|ԱՉՍ ԾՆԱՒՂԱՑ ԻՄՈՑ. ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԵՔ:

Հրատ. Ջալալյանց, Բ, 123. Ալիշան, 52. Սմբատյանց, 511:

1023. ՊԱՏՎԱՆԴԱՆ խաչքարի, ուղղահայաց դրված, պահվում է գերեզմանատան արևմտյան մասում. վրան 4 տող.

ԻԹՎՉԴԵՍՈՍԿԵՒԱՆԿԱՆԿՆ
ԵՑԻՁԽԱՉՍԻՆ | ՁԵՒԱՄՈՒՍՆՈՅ
ԻՄՈՅԵՒԵՂԲԱՅՐ | ԻՄՈՇԱՐՈՅ
ՅԱՂԱՒԹՍՅԻՇ | ԵՑԷՔ

Ի ԹՎ. :ՉԴ: (1255) ԵՍ ՈՍԿԵՒԱՆ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԻՆՁ ՈՒ ԱՄՈՒՍ-ՆՈՅ| ԻՄՈՅ ԵՒ ԵՂԲԱՅՐ ԻՄՈ ՇԱՐՈՅ. ՅԱՂԱՒԹՍ ՅԻ[ՇԵ]ՑԷՔ:

Հրատ. Սմբատյանց, 512։

1024. ԽԱՉՔԱՐ, մեծ, հուսավային շրջանակի տակին միայն թվականը.

ԹՎ
Չ

ԹՎ. :Չ: (1251):

1025. ԽԱՉՔԱՐ, անարվեստ, տակին միայն թվականը.

Թ ՉԻԱ

ԹՎ. :ՉԻԱ: (1272):

1026. ԽԱՉՔԱՐ, դեղաքանդակ, շրջանակի վրա 4 տող.

ԹՍ
ՉԻ
ԸՌՁ
ԱՏՅԻՇ

Թ[ՎԻ]Ս :ՉԻ: (1271) ԸՌՁ|ԱՏ ՅԻՇ[ԵՑԷ]Ք:

1027. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին ննջեցյալի պատկեր և 3 տող.

ԹՎՋԿԴ
ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ ՂԱ
ԱՃԻՆ ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ . . .

ԹՎ. :ՋԿԴ: (1515). ԱՅՍ [Է] ՀԱՆԳԻՍՏ ՂԱՐ|ԱՃԻՆ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ . . .

Ծանոթ. Բացվել է վանքի մոտի գերեզմանատան եզրին, 1966 թ. պեղման. գծագիրն ստացանք նույն գյուղացի ուսուցիչ Հայրիկ Ղազարյանից։

1028. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ագուցված գյուղամիջի ս. Ածածին եկեղեցու հարավային պատի արևելյան անկյունի մոտ. բերված է Շողագա վանքի շրջապատի գերեզմանոցից. 6 տող.

ԱՅԱՀԱՆԳ
ԻՍՄ.ՈՍԿԱ
ՆՍԱՐԿՕԱՔ
ԻՆՈՐ:Ժ:Է:Ա Մ
ԵԱՑՓՈԽԵՑՕ
ԹՎԿ ՋԾԴ

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՈՍԿԱ|Ն ՍԱՐԿՕԱՔ|ԻՆ. ՈՐ :ԺԷ: ԱՄ|ԵԱՑ ՓՈԽԵՑՕ.| ԹՎԿ. :ՋԾԴ: (1535):

Լուսանկ. 206

*1029. ԽԱՉՔԱՐ, գտնվում է գերեզմանատան հարավային եզրին, քիվին և թևերի արանքներում.*

ՍԲԽԱՉՔԱՐԷԽԱՒՍ:ԲԱՐԱԹԱՂԻՆ

ԹՎ ՋՂԹ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԲԱՐԱԹ ԱՂԻՆ. ԹՎ. ՋՂԹ: (1540):

Հրատ. Լալայան, XXIV, 59, Լուսանկ. 207

*1030. ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, գրված եկեղեցու արևմտյան մուտքի մեջ. քիվին և ներքևի մասում 3 տող.*

ՄԲԽԱՉԲԱՐԽՍՓՆՈՍԱՂՆ

Թ ՎՌ

Ի Է

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐ[Է]ԽԱՒՍ ՓԱՆՈՍ ԱՂԻՆ ԹՎ. ՌԻԷ: (1578):

Հրատ. Լալայան, XXIV, 58, Սմբատյանց, 510,

*1031. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, փոքր, արևելյան ճակատին և վերին կամարի մասում 5 տող.*

ՁԵՌԱՄԲԴԱՒԻԹԵՊԻՀՕՐ· ·ՍՈՑ

ԱՅՍԷՀԱՆ

ԳԻՍՏ:ՄԿՐՉՆ

Ռ:Ծ:ԹՎԿՆԻ

Ա:ԱՒՐՄԷՌՕ:ՔՍ

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՄԿՐ[Տ]ՉԻՆ.| ՌԾ (1601) ԹՎԱԿԱՆԻ| :Ա: ԱԻՐՆ ՄԵԾԻ. ՔՍ. [ՅԻՇԵՑԷՔ]. ՁԵՌԱՄԲ ԴԱԻԹ ԵՊԻ[Ս]ԿՈՊՈՍԻ[, ՀՈՐ ԵՊԲՕՐ ՍՈՅՐԱՆ:

*1032. ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, գրված եկեղեցու արևմտյան մուտքի մեջ. քիվին և ստորին մասում 3 տող.*

ՄԽՉԲԱԽՍ=ԲԷՐԱՄԻՆ=ԳՌԼԱՆԻՆ

Թ Ռ

ԾԱ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԲԷՐԱՄԻՆ. ԳՈՒԼԱՆԻՆ.| ԹՎ. ՌԾԱ: (1602):

Հրատ. Սմբատյանց, 511, Լալայան, XXIV, 58.

1033. *ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, դրված է եկեղեցու արևմուտք, մատուռի մեջ, քիվին 1 տող.*

ՍԲԽԱՉՍԲՐԷԽԱՄԸ· · ·ԴԱՆԻՍԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ Բ[Ա]Ր[Է]ԽԱԻՍ
ՏՐ [ՎԱՐ]ԴԱՆԻՍԻՆ:

Հրատ. *Լալայան, XXIV, 57։*
Լուսանկ. 208

1034. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, կիսովին խրված հողի մեջ, հյուսիսային երեսին 1 տող.*

ԿԱԽՂԱՅԻՂ.ԿԱԶՄՈԻՂՍԲԽԱՉՔԲԱՐԷԽԱԻՍԼԱՆԻԷՆ
ԱԻ-Ն

ՊԱԽՇԱՑԻՇ ԿԱԶՄՈՂ. ՍԲ. ԽԱՉԱ ԲԱՐԷԽԱԻՍ ԼԱՆԷԻՆ, ՊԱՐՈՆ:

1035. *ԽԱՉՔԱՐ, կանգնած եկեղեցու արևմտյան պատի տակ. քիվին 1 տող.*

ՍԲԽԱՉԲԱՐԷԽԱՍԷՇԱՀԷՄԱՍՈԻՐԱՂԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ Է ՇԱՀՄԱՍՈԻՐ
ԱՂԻՆ:

Լուսանկ. 209

1036. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է եկեղեցու արևմտյան պատի տակ, քիվին 1 տող*

ՍԲԽՉՍԲԱՐԽԱՍԱՂԱԲԻ: ՋԱՆԻ

ՍԲ. Խ[Ա]ՉՍ ԲԱՐ[Է]ԽԱԻՍ ԱՂԱԲԻՆ,
ՋԱՆԻՆ:

Հրատ. *Լալայան, XXIV, 58։*
Լուսանկ. 210

1037. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է եկեղեցու արևմտյան պատի տակ, քիվին 1 տող.*

ՍԲ ԽԱՉՍԲԱ ՐԱՎՆԻՍՅՔ




ՍԲ. ԽԱՉԱ ԲԱՐ[Է]ԽԱԻՍ ԱՎ[Ա]ՆԻՍ[Ի]Ն,
ՅԻՇԵՑԷՔ, ԹՎ. :ՌԲ: (1553):

Լուսանկ. 211

1038. *ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, կանգնած է գերեզմանատան հարավային եզրին. քիվին և ստորին մասում 2 տող.*

ՍԲԽԱՉԲԱԷԽԱՍՂԱՂՈՒՆԻ
ԱՁԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՇԱՂՈՒՆԻ[Ն]:

Ծանոթ. *Տակի բառը թերի է թողել գրիչը։*

1039. ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, գտնվում է եկեղեցուց արևմուտք, մատուռի մեջ, քիվին 1 տող.

ՍԲԽԱՉԲՄՐԽԱՍՆԱԽԱՇԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ՆԱՆԱՓԱՇԻՆ:

Հրատ. Սմբատյանց, 510։

1040. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև, հյուսիսային կողին 4 տող.

ԱՅՍԷ
ՀԱԳՍ
ՏԱՂ
ԱՉՄԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱԳԱՉՄԻՆ։

1041. ԽԱՉՔԱՐ, գտնվելիս է եղել եկեղեցուց արևմուտք մատուռի հարավ-արևելյան պատին կից, գրոեց.

Սբ խաչս բարեխաւս Հայրապետ աղին, թվ. :ՋԿԸ: (1519)։

Ծանոթ. Այս խաչքարն այժմ չկա. անձնանունը հավանաբար սխալ է վերծանված.

Հրատ. Լալայան, XXIV, 58։

ՄԱՄՐՈՒՑ ԱՆԱՊԱՏ

1042. ՄԱՄՐՈՒՑ ԱՆԱՊԱՏ, ներքուստ, բեմը կազմող հյուսիսային պատի ծեփի վրա 7 տող.

Ի ԹԱԳ. Ա-ՈՐՈՒԹԵԱ
ՊԱՂԻՆԻՇԽԱՆՈՒԹ
ԵՆ···ՍՆՊԱՏԱԵԻՀԱ
ՋՐ··· ՏՈՒԹԵՆ····
Ս····ՊԵ· ԱՅԵՍ····
ԻՈՒԹՆ····ԲԵՅ···Ս
ՆԲՆ······ԼՌՆ Ս··Ա

Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵՆ ԱՊԱՂԱՅԻՆ,
ԻՇԽԱՆՈՒԹ[ԵՆ] . . . ԱՆՊԱՏԻ.
ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵՆ . . .
. . . . . . . . . . . . . . .

Ծանոթ. Արձանագրված մասի ծեփը ջարդոտված է և ստորին մասը թափված։

Այս արձանագրության առաջին հրատարակիչ Սմբատյանցի մոտ (որից նույնությամբ արտագրել է նաև Լալայանը), խիստ աղավաղված են անձնանունները ու թվականը։ Աբաղա Իլխանը տիրել է 1265—1282 թվականներին, իսկ Սմբատ իշխան Օրբելյանը մահացել է 1273 թ., հետևաբար արձանագրությունը գրված պիտի լինի Սմբատի կենդանության օրոք, 1273-ից առաջ։

Հրատ. Սմբատյանց, 513; Լալայան, XXIV, 58։

1043. ԽԱՉՔԱՐ, անտառի ներսում գրված. հենած բեմի պատին, թևերի արանքում 3 տող.

Թ | Վ
ՉԽ | ԱԿ
ՈԲ· | ··Ս

ԹՎ. :ՉԽ: (1291): ԱԿՈԲԻՍ:

1044. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է անապատի հյուսիսային կողմի կիսավեր սրահի պատի մեջ. քիվին ու խորանի շուրջը և թևերի արանքներում 3 տող.*

ԽԱՉՍԲՐԽՍՉԻՋԱՔԻՆԱՄՌԻՍ...




ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՋԻՋԱՔԻՆ ՐԱՄՈՒՍ-ՆՈՅ . . . . |ԹՎ.| :ՋԽ: (1491):

1045. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է անապատի հյուսիսային կողմի կիսավեր սրահի պատի մեջ, նախորդի մոտ. թևերի արանքներում և տակին 6 տող.*

Թ Վ
Ջ Ծ

ԿՆԵՑԱԽԱՉՍՅԻՇԱՏԱ
ԿԱՆԻՆՈՐԷՐԻՇԽԱՆՏԱՆՍԳԵ
ՂԱՄԱՑՈՎՀԱՆԴԻՊԻՔՅԻՇԷ
ՑԷՔԻՔՍ

ԹՎ. |:ՋԾ: (1501)| Կ[ԱՆԿ]ՆԵՑԱՒ ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱ|Կ ԱԻԱՆԻՆ, ՈՐ Է[Ր] ԻՇԽԱՆ ՏԱՆՍ ԳԵ|Ղ[Ա]ՄԱՑ. ՈՎ ՀԱՆ-ԴԻՊԻՔ ՅԻՇԵ|ՑԷՔ Ի ՔՍ:

1046. *ԽԱՉՔԱՐ, փոքր, հենած անապատի արևմտյան պատին ներքուստ, թևերի շուրջը 1 տող.*




ԹՎ. :ՋԿԴ: (1515):

1047. *ԽԱՉՔԱՐ, մեծ, հենած անապատի բեմի պատին, ներքուստ, քիվին և թևերի արանքներում 4 տող.*

ԽՍԲՐԷԽԱՂԱՅԳԷԿԻՆ




ԵԻԲԾՆՈՂԻՆԱՍԻԼՋԱՏ
ԻՆ

[ՍԲ] Խ[Ա]Չ[Ս] ԲԱՐԷԽԱԻՍ ԱՂԱՅԳԷԿԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԻՆ ԱՍԻԼՋԱՏ|ԻՆ:|

ԹՎ. :ՋՂԸ: (1549):

1048. *ԽԱՉՔԱՐ, մեծ, հենած է անապատի արևմտյան պատին, ներքուստ, քիվին, շրջանակին և տակին 4 տող.*

ԽՉՀԱՐՆԻ




ՋՂԸ
ՏՐԱՉԱԻՆԹՎ

ԽԱՉՍ ՀԱՐՆ ԻՄ[Ի] ՏՐ ԱՉԱՐԻՆ. ԹՎ. :ՋՂԸ: (1549)| Կ[ԱՉՄՈՂ] ՄԽԻ[ԹԱՐ]:

1049. *ՄԱՄՐՈՒՅ ԱՆԱՊԱՏ, գմբեթի արևելյան կողին, արտաքուստ 4 տող.*

ԿԱՄԱՆԱՅՆՈՐՈԳԵՑԱՒՄԵԿՂԵՑՍ=ԹՎԻՆ=ՌԿ=ԻԿԶ ԼՍՈ
ԻԹԵ·ՏՐՄԵԼԻՔԻՍԷԹԻՆ=ԻԹԳՐՌԵ:ՇԱՀԱՊԱՍԻՆԻՂԱՆ
ՈՒԹԵ:ԱԻՐԳԱՆԱԽԱՆԻՆ:ԵԻՄԷԼԻՔՈՒԹԵ:ՏՐ ՎԱՐԴԱ
ՆԻՆ:ԵՍԴԱԻԻԹԱՌԱՋՆՈՐԴՎԱՆԻՑՍ:ՆՈ

ԿԱՄԱՒՆ ԱՅ. ՆՈՐՈԳԵՑԱՒ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՆ ԹՎԻՆ ՌԿ։ (1611)։
Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏՐ. ՄԵԼՔԻՍԷԹԻՆ. Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ
ՇԱՀԱՊԱՍԻՆ, Ի ՊԱՆ|ՈՒԹԵԱՆ ԱՄԻՐԳԱՒՆԱԽԱՆԻՆ ԵՒ ՄԵԼԻՔՈՒԹԵԱՆ
ՏՐ. ՎԱՐԴԱ|ՆԻՆ։ ԵՍ ԴԱՒԻԹ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՆԻՑՍ ՆՈՐ|ՈԳԵԼ ԵՏՈՒ։

*Հրատ. Սմբատյանց, 512։ Լալայան, XXIV, 58։*

1050. *ՄԱՄՐՈՒՅ ԱՆԱՊԱՏ, արևելյան պատի վերին մասում, արտաքուստ 3 տող.*

ԿԱՄԱՆԱՅԵՍԴԱԻ
ԹԵՊՍ=ՆՈՐՈԳԵԼԵՏՈՒՍԲՋԵԿ
ԵՂԵՑԻՍՅԻՇՏԿՀՈԳՈՅԻՄ

ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ԴԱՒԻ|Թ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՆՈՐՈԳԵԼ ԵՏՈՒ ՍԲ. ՋԵԿ|ԵՂԵՑԻՍ.
ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՅ ԻՄ։

1051. *ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, կանգնած է անապատի արևելյան պատի գլխաց, խաչքարերի շարքում, քիվին, շրջանակներին և թևերի տակ.*

ԱՅԾԵԱԼԱՐԵԱՄԲՅԻՄԻՉՍԲՄ
ԽՕՍԴԱԻԹԵՊԿՍԻՆՀՈԳՆ

Թ Վ
Ռ Կ

ՅԻՇԵ
ՑԷՔ
ԻՔՍ
ԴԱԻԹ
ԵՊԿՍ

ՈՐՍԱՅ
ՆՈՐ
ՈԳԵ
ԱՑՋԵ
ԿԵՂԵՑ
ԻՍ:

ԱԾԵԱԼ ԱՐԵԱՄԲ ՅԻ. ՍԲ. ԽԱՉՍ
ԲԱՐ|ԽՕՍ ԴԱՒԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ
ՀՈԳՈՅՆ։| ՅԻՇԵ|ՑԷՔ| Ի ՔՍ.| ԴԱՒԻԹ|
ԵՊԻՍԿՈՊՈՍ.| ՈՐ ՍԱՅ| ՆՈՐ|ՈԳԵ|ԱՑ
ՋԵ|ԿԵՂԵՑԻՍ. ԹՎ. ՌԿ։ (1611)։

*Հրատ. Ջալալյանց, Բ, 124։ Ալիշան, 52։*
*Սմբատյանց, 513։ Լալայան, XXIV, 59։*

1052. *ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, կանգնած է անապատի արևմտյան պատի մոտ, քիվին 1 տող.*

ՍԲԽՋՍԲԱՐԵԽԱՍԴԱԻԹԻՊԿՍՆ

ՍԲ. ԽԱՋՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԴԱՒԻԹ
ԻՊԻՍԿՈՊՈՍԻՆ։

Ծանոթ. *ԽԱՉ բառի ԽԱՋ ձևով գրությունը այս ժամանակներում հանդիպում է հաճախ։*

1053. *ԽԱՉՔԱՐ, փոքր, ղեղաքանդակ, կանգնած է անապատի արևմտյան պատի մոտ, կից նախորդին. քիվին 1 տող.*

ԵՍԴԻԹԻԳԿՍԻՋՄՃԻՄԻՆԲԷԿԻՆ

ԵՍ Դ[Ա]ԻԻԹ ԻԳԻՍԿՈՊՈՍ [ԿԱՆԳՆԵՑԻ]
Խ[Ա]ՉՍ ՄԱԻՐ ԻՄ Խ[Ա]ՆԲԷԿԻՆ:

Ծանոթ. *Այս 5 արձանագրությունների մեջ հիշատակված Դավիթ եպիսկոպոսը վանքի նորոգողն է. բոլոր արձանագրությունները ժամանակով իրար մոտ են.*

1054. *ՄԱՍՐՈՒՑ ԱՆԱՊԱՏ, արևմտյան պատի հարավային մասում, բարձրում, մի երեսապատման քարի վրա 5 տող.*

ՅԻՇԵՅԷՔԻՔՍՂՄ
ԱՄՌՐԱՏԵՑԻՓԱՆ
ՈՍՆ։ՈՐՎՍ̄ՀՈԳՈՅՆ
ԵՒԻՒՐԾՆՕՂԱՑՆ
ԵԿՂ̄ՑՈՒՍՆՈՐՈԳԵԼՈՒՆ

ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. Գ[ԱՐ]ԱՄՌՈՒՐԱՏԵՑԻ ՓԱՆ|ՈՍՆ
ՈՐ ՎԱՄՆ ՀՈԳՈՅՆ| ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՑՆ|
ԵԿԵՂԵՑՈՒՍ ՆՈՐՈԳԵԼՈՒՆ [ՆՊԱՍՏԵՑ]:

Ծանոթ. *Արձանագրությունը վերաբերում է 1611 թ կատարված վերանորոգման աշխատանքներին։*

1055. *ՄԱՍՐՈՒՑ ԱՆԱՊԱՏ, արևմտյան պատի հյուսիսային մասում, երեսապատման մի փոքր քարի վրա, 6 տող.*

ՅԻՂ̄ՑՔՍ̄ՁԲ
ԱԲԷՆՌՍԱՅ
ԼՆՇՆՈՐՀԵՑ
ՎՍ̄ԲԱՐԻԿՐԷ
ԵՒԱ. . . .
ԹՎ ՌԾ

ՅԻՇԵՑԷՔ [Ի] ՔՍ ԶԲ|ԱԲԷՆ, ՈՐ ՍԱՅ|ԼՆ ՇՆՈՐ-
ՀԵՑԻ| ՎԱՍՆ ԲԱՐԻ ԿՐԷ[Լ]ՈՒՆ]| ԵՒ . . . . . :|
ԹՎ. :ՌԾ: (1601):

Ծանոթ. *Թվականը գրված է մանր տառերով. հավանաբար վերաբերում է 1611 թ. վերանորոգման աշխատանքներին և թվականի մեջ միավոր նշանակող տառը չի գրվել։ 5-րդ տողը կիսատ է թողնված, թեև քարի վրա ազատ տեղ կա։*

1056. *ԽԱՉՔԱՐ, հենված հյուսիսային պատին, ներքուստ. ճակատին 4 տող.*

ԵՍՎ ԱՐԱԶ
Ջ̄ՆԷՐ ՍԵԿԱ
ՆՄ ԱՆ։։
ՌՐ ։։··

ԵՍ ՎԱՐԱԶ| . . . . . | . . . | . .

Ծանոթ. *Արձանագրության մնացած մասերը խիստ մաշված և անորոշ են. քանդակների ոճով XIII դարի գործ է։*

1057. *ԽԱՉՔԱՐ, փոքր, կանգնած է անապատի հյուսիսային կողմի կիսավեր սրահի մեջ. քիվին 1 տող.*

ԽԱՉԴՈՎԼԱԹՆՍԼԻ···

ԽԱՉՍ ԴՈՎԼԱԹ[Ի]Ն . . . . . :

1058. *ԽԱՉՔԱՐ, կանգնած է անապատի արևելյան պատի մոտ. քիվին 1 տող.*

ԽՉՍԲՄԷԽԱՅՈՎԼԱՍՓՆ

ԽԱՉՍ ԲԱՐՁԽՍ[ԻՍ] ՅՈՎԱՍԱՓ[Ի]Ն:

1059. ԽԱՉՔԱՐ, կիսովին թաղված հողի մեջ. անապատի հյուսիսային կիսավեր որմի մեջ. խորանի շրջանակի հարթության վրա 1 տող.

ԿՆԿՆՑԱԽԱՉՍ ՂԿՍԷՊՍԿՊՍԻՆ:

ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ՂՈՒԿԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ծանոթ. Նախորդ հրատարակիչների մոտ, բացի այլ տարբերություններից, նշանակված է նաև թվականը՝ ՋՃ, որը մենք չենք տեսել տեղում:

Հրատ. Սմբատյանց, 513։ Լալայան, XXIV, 59։
Լուսանկ. 212

1060. ԽԱՉՔԱՐ, կիսովին թաղված նախորդի մոտ. քիվին 1 տող.

ՍԲԽՉ ՂԿՍԷՊ·ՍԼԹՆՉՏԻՍ+Ն

ՍԲ. ԽԱՉՍ ՂՈՒԿԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ. Ս[ՈՒ]Ր[Բ] ԹԱՆՁ[Ա]ՏԻՆ:

1061. ԽԱՉՔԱՐ, կիսովին թաղված հողի մեջ. նախորդի մոտ. քիվին 1 տող.

ՍԲԽՉԵՐԷԽՍՓՐՃԱ:ԲՈՅՃՆԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ Փ[Ա]ՐԻՃԱ[ՆԻՆ], ԲՈՅՃԱՆԻՆ:

1062. ԽԱՉՔԱՐ, կանգնած անապատի հյուսիսային որմի մեջ. քիվին 1 տող.

ՍԽԱՉՍԲՐ:ՍԷՎՐԽՆԻՆ:   ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐ[Է]ԽԱՒՍ[,] ՍԷՎԱՏԽԱՆԻՆ:

1063. ԽԱՉՔԱՐ, փոքր, նախորդի մոտ, քիվի կեսը կոտրված, մնացել է հետևյալը.

··ՅՄԱՐՏԻՐՈՍ:ՔՀՆ

ՍԲ ԽԱՉՍ ՄԱՐՏԻՐՈՍ ՔԱՀԱՆԱՅԻՆ:

1064. ԽԱՉՔԱՐ, կանգնած է նախորդին կից հյուսիսից, քիվին թերավարտ 1 տող.

ՍԲԽԱՉԲՐԷԽԱՒՍ

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ:

Ծանոթ. Շարունակության համար տեղ կա, բայց չի գրված. նման ձևի արձանագրություններ հաճախ են հանդիպում. դրանք առանց պատվերի շինված խաչքարեր են, որոնք վաճառելիս վարպետը պիտի ավելացներ ննջեցյալի անունը միայն, սակայն ինչ-ինչ պատճառներով չի արվել:

Լուսանկ. 213

## 27. ՎԵՐԻՆ ՔՅՈԼԱԳՐԱՆ (ՀՆՈՒՄ՝ ՓԱՌԱԿԱՆՔ)

Այս գյուղի անունը մոռացված է եղել։ Այն վերականգնելու՝ տեղագիր հեղինակների փորձերն էլ ավելի մեծ շփոթություններ են մտցրել հարցի մեջ։ Այժմ անմարդաբնակ այս գյուղատեղը Սմբատյանցը անվանում է Կարմիր խաչեր, իսկ հին անունը՝ Վաղավեր, Լալայանը՝ Կարմիր խարաբա և նույնպես Վաղավեր։ Թե՛ նոր և թե՛ հին այդ անունները սխալ են։ Կարմիր խարաբա գյուղատեղը գտնվում է սրանից 15—20 կիլոմետր արևելք, Կարճաղ-